# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
# № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Աքվատիկ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գալոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 30.01.2019թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 160186455 (հարյուր վաթսուն միլիոն հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | «Աքվատիկ» ՍՊԸ<br>ՀՀ, 1210 Գեղարքունիքի մարզ, գ.Ծովազարդ<br>«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 115001393160161 5<br>ՀՎՀՀ 08410252<br>տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Կ. ԳԱԼՈՅԱՆ |

**Հավելված N 1**
**№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ ամիսների, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս |
| 1 | մսի պահածո /Մսի պահածո 525գ./ | կգ | 74679 | 2145 | 160186455 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 14679 |

**Ծանոթություն՝** մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

**Հավելված N 2**
**№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8-1 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | մսի պահածո /Մսի պահածո 525գ./ | 15131631/1 | 32175000 | 64350000 | 96525000 | 128700000 | 160186455 | 160186455 | 160186455 | 160186455 | 160186455 | 160186455 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Լ. ՄԱԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Աբլատիկ» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԳԱԼՈՅԱՆ